



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
 հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am, www.yasu.am

№ 011 «30» մայիսի 2019 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2019 թ. մայիսի 30-ին տեղի ունեցած թիվ 11 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 32-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում օրակարգային երկու հարցով տեղի ունեցավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 11 նիստը: Նիստի սկզբում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը, ողջունելով ներկաներին, ներկայացրեց օրակարգը, որը քվեարկությամբ հաստատվեց միաձայն:

Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտոր Ա. Սիմոնյանի դիմումի համաձայն իր լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը: Հարցը դրվեց քննարկման, և Խորհրդի անդամները 30 կողմ և 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ բավարարեցին ռեկտոր Ա. Սիմոնյանի դիմումը:

Նիստի օրակարգային երկրորդ հարցը վերաբերում էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակմանը:

Մինչ թեկնածուների առաջադրմանն անցնելը՝ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ Ա. Վաղարշյանն առաջարկեց ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությունն անցկացնել փակ, գաղտնի քվեարկությամբ: Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց ԵՊՀ կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր Գ. Հաջյանը, որն

առաջարկեց բաց քվեարկություն անցկացնել՝ նշելով, որ այս դեպքում յուրաքանչյուր ոք պետք է տղամարդկություն ունենա ազատ արտահայտելու իր դիրքորոշումը:

Այս հարցի վերաբերյալ ելույթներով հանդես եկան ԵՊՀ Ուես նախագահ Դ. Ափոյանը, որը պնդեց, որ փակ քվեարկությունն ազատ կամընտրության դրսևորում է լինելու, և ԵՊՀ անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը, ըստ որի՝ փակ քվեարկությունից վախենալը նշանակում է կասկածի տակ դնել ժողովրդավարության պայմաններից մեկը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը Խորհրդի անդամներին հստակեցրեց, որ ԵՊՀ ռեկտորի ընտրության կարգի համաձայն՝ քվեարկությունն անցկացվում է փակ, իսկ այս դեպքում որոշվում է, թե ով է լինելու ժամանակավոր պաշտոնակատարը, այսինքն՝ իրավական կարգավորում չկա, թե ինչ կարգով պետք է անցնի քվեարկությունը, և Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացրեց առաջարկությունը՝ արդյոք ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է համապատասխանի այն չափորոշիչներին, որոնք սահմանված են ԵՊՀ ռեկտորի պաշտոնին հավակնողի համար: 22 կողմ, 0 դեմ, 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ առաջարկությունն ընդունվեց:

Այնուհետև քվեարկության դրվեց նաև ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրությունը փակ, գաղտնի անցկացնելու հարցը, որը 12 կողմ և 20 դեմ ձայների հարաբերակցությամբ չընդունվեց:

Անցնելով ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածուների առաջադրմանը՝ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյանն առաջադրեց ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով նախկին պրոռեկտոր, Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գևորգյանի թեկնածությունը՝ փաստելով, որ նա վարչական աշխատանքների տասնամյակների փորձ և մեծ ավանդ ունի համալսարանի գիտական ձեռքբերումների գործում:

Ձայնի իրավունք խնդրեց Ա. Վաղարշյանը, որն առաջադրեց ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի թեկնածությունը՝ փաստելով, որ համալսարանի գործունեության այս փուլում կարևոր է, որ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը զինված լինի իրավական գիտելիքներով և հմտություններով:

Թեկնածուների առաջադրումներից հետո ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամները հանդես եկան ելույթներով՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումները: Այնուհետև ելույթ ունենալու ցանկություն հայտնեց Խորհրդի անդամ Հ. Արշամյանը, որն առաջարկեց, որ ելույթով հանդես գան և իրենց ծրագրերի մասին խոսեն ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածուները:

Գ. Գևորգյանն իր ելույթում փաստեց, որ այս պահին անտրամաբանական է խոսել ծրագրային դրույթների մասին այն պարագայում, երբ երեք ամսվա ընթացքում

լինելու են քննաշրջան և արձակուրդ, ապա համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումներ:

«Թե ինչպիսի վարչական աշխատող եմ եղել ես, համալսարանականները գիտեն, ովքեր էլ չգիտեն, այս ընթացքում կարող էին հետաքրքրվել: Այս նույն ամբիոնից ես դեռ երկու տարի առաջ խոսել եմ համալսարանում բարեփոխումների անհրաժեշտության մասին, որն անհետևանք մնաց: Երբ լինեն ԵՊՀ ռեկտորի ընտրությունները, ես հանդես կգամ ծրագրային ելույթով, որը կքննարկվի և կամ կհաստատվի, կամ չի հաստատվի», - հավելեց Գ. Գևորգյանը:

Վ. Հովհաննիսյանն ասաց, որ հեռանկարային ծրագրերի մասին խոսելը դեռ շատ վաղ է, իսկ կարճաժամկետ ծրագրերի մասին խոսելով՝ փաստեց, որ առաջին հերթին ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է կայունություն ապահովի բուհում: «Պետք է գործուն քայլեր ձեռնարկենք՝ առողջ մթնոլորտ ձևավորելու համար: Բացի դրանից՝ կարծում եմ, որ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը պետք է բավարար պայմաններ ապահովի՝ առաջիկայում ԵՊՀ ռեկտորի ընտրությունը կազմակերպելու համար», - ասաց Վ. Հովհաննիսյանը:

Ելույթների ավարտին քննարկվեց հարցը, թե ինչ հաջորդականությամբ պետք է քվեարկել թեկնածուների օգտին: Առաջարկվեց թեկնածուների ներկայացման հերթականությունը որոշել՝ ըստ առաջադրման հաջորդականության և ըստ վիճակահանության: Առաջարկությունները դրվեցին քվեարկության, որի արդյունքում որոշվեց թեկնածուներին ներկայացնել՝ ըստ առաջադրման հաջորդականության:

Այլ հարցեր և ելույթներ չհնչեցին, ուստի նախագահ Գ. Մուրադյանն առաջարկեց ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրության հարցը դնել քվեարկության, որի արդյունքում Գ. Գևորգյանը ստացավ 21, իսկ Վ. Հովհաննիսյանը՝ 11 ձայն:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Խորհրդի քարտուղար՝

Ա. Իսրայելյան